ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 դեկտեմբերի 2025 թվականի N 1966 - Ն

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐՁՐ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել արհեստական բանականության ոլորտում բարձր արտադրողականությամբ հաշվողական ռեսուրսներին (էյՋԹիՍի (High-performance computing - HPC) հասանելիության ապահովման պետական աջակցության փորձնական ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն հավելվածի: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2026 թվականին:

2. Սահմանել, որ ծրագիրն իրականացնում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

3. Սահմանել, որ ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունն աջակցությունը տրամադրում է սուբսիդիայի հատկացման եղանակով:

4. Թույլատրել նախարարությանը «Ամազոն Վեբ Սերվիսիս (Amazon Web Services-AWS)» ընկերության հետ կնքել սուբսիդիայի տրամադրման մասին պայմանագիր (համաձայնագիր), որով կսահմանվի նաև հաշվետվողականության ձևը և վճարման պայմանները՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման հավելվածի 6-ից 8.3-րդ կետերի իրավակարգավորումները:

5. Սուբսիդիայի հաշվարկման հիմքում դրվում է ծրագրով սահմանված պահանջներին համապատասխան հասանելիություն ստացած յուրաքանչյուր դիմողի օգտագործած ռեսուրսի արժեքի 100 տոկոսի չափով փոխհատուցում հատկացնելու մոտեցումը: «Ամազոն Վեբ Սերվիսիս (Amazon Web Services-AWS)» ընկերությունը յուրաքանչյուր ամսվա ավարտին ներկայացնելու է հաշիվ-վավերագիր կիրառելի բոլոր վճարների և գանձումների համար, որոնք հաշվեգրվել են յուրաքանչյուր ամիս ծառայություններից օգտվելու համար:

6. Ծրագրի իրականացման համար հատկացվող սուբսիդիայի հաշվարկման հիմքում դրված ծախսերի կազմը, այդ ծախսերի, այդ թվում՝ նվազագույն շահավետ գնի հաշվարկման նորմատիվներն ըստ առանձին ոլորտների և գործունեության տեսակների սահմանելու անհրաժեշտությունը բացակայում է, և աջակցության նպատակով տրամադրվող գումարների հաշվարկման համար հիմք են ընդունվում «Ամազոն Վեբ Սերվիսիս (Amazon Web Services-AWS)» ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ծառայությունների մատուցման արժեքները:

7. Դիմողներին տրամադրվող ռեսուրսների ամբողջական ծավալը չի կարող գերազանցել նախարարության և «Ամազոն Վեբ Սերվիսիս (Amazon Web Services-AWS)» ընկերության միջև կնքված պայմանագրով սահմանված ընդհանուր սահմանաչափը:

8. Ծրագրի իրականացման համար ֆինանսական միջոցները հատկացվում են տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և/կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից:

9. 2026 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրվող ընդհանուր սուբսիդիայի չափը չի կարող գերազանցել 400,000.0 հազ. դրամը:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ